


Հաստատութեան մահուան ձեմարանը միակ բարձր կրթական հաստատութիւնն է Ռուսահայոց, Տաճկահայոց և Պարսկահայոց համար, որտեղ պատրաստում են նրանց համար օգտակար գործիչներ, և ուսուցիչներ, ուրեմն Ա. Էջմիածնի և հայ ժողովրդի վրայ բարոյական մեծ պարտականութիւն կայ խնամելու և իւր բարձրութեան վրայ պահելու այդ հաստատութիւնը։ Կրկին և կրկին խնդրելով Զերդ Վեհափառութեան բարեհաճ ուշադրութիւնը Զեր խնամքին թողնուած ձեմարանի ներկայ գրութեան վրայ՝*

Մնում եմ ամենախոնարհ որդի և ծառայ
Թաքեն վարդապետ Աղաւելեանց

29 Յունվարի 1907

Ա. Էջմիածին:



Գ Ր Ա Կ Ա Ն

Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի Հ Ե Տ Ք Ա Վ

Գլ. Զ.

Միստեր Գրէյ եռանդուն կերպով ձեռք զարկեց «Փարոսի» կազմակերպութեան Ռւդիզ Անկիւնում։ Մէկ խուլ փողոցի ծայրում նա գտաւ մի ընդարձակ փայտածածք պարապ շինութիւն։ Այդ շինութիւնը առաջ մի

* Մենք ըստ ամենայնի համակարծիք չենք հ. Բարդէն վարդապետին։ Նորա դիտողութիւններից շատերը միակողմանի են մեր կարծիքով և ոչ լաւ ուսումնառիքուած, բայց ուերով ապում ենք այս յայտաբարութիւնը իբրև Ա. Աթոռի միաբանաներից մէկե կարծիքը։

մեծ գործարանի պահեատի համար էր ծառայում։ Գործարանը մի տարի տռաջ այսուել էր և այդ շինութիւնը պարապ մնացել։ Գրէյ վարձեց այդ չնշին գնով։ Հրամայեց ներսը ժարքել, հասարակ, տղիտակ նստարաններ շինել և հինգշարթի օրը տեսն ինչ արդէն պատրաստ էր։

Արբաթ առաւօտեան Աւղիդ Անկիւնի թաղում տեսն տեղ յայտարարութիւններ էին կացրած, որոնց վրայ մեծ տառերով զրուած էր, թէ շաբաթ երեկոյեան ժամը 6-ին այս ինչ փողոցի այս ինչ շինութեան մէջ կը լինի երեկոյեան ժամերգութիւն։ Յայտնի երգչուհի օրիորդ Վինոլում մենակ և խմբի հետ միասին կերպէ մի քանի սաղմոսներ և հոգեւոր երգեր, իսկ յայտնի քարողիչ, պաստոր Մէկուելլը քարոզ կը խօսի։

Յայտարարութիւնները ու շաբաթութիւն էին գրաւում։ Աւղիդ Անկիւնի բնակիչները խժքերով կանգ էին առնում ու կարգում։ Լաւում էին հանաքներ, կոպիտ արտայայտութիւններ, խիստ նկատողութիւններ։

— Նատ շնորհակալ ենք ձեր ժողովից։ Միւս փողոցում կայ մի լաւ դինետուն, այնտեղ շատ աւելի ուրախ է, — ասում էր մի երիտասարդ գործաւոր, հարթկանի գէմքով, պատռսւած բրուզով։

— Այստեղ ուտելու բան չունինք, իսկ նրանք երգի են հրաւիրում, — չարացած մրմրթում էր մռայլ գէմքով մի բանուոր։ Քարոզի փոխարէն լաւ կը լինէր մեր աշխատանքի վարձատրութեան մասին մտածէին։

Բայց լսում էին նաև համեկրութեան ձայներ։

— Ինչ կայ, դուցէ և մի բան դուրս գայ գրանից, Փող հօ չեն ուզում և ուժով հօ չեն ստիպում։ Աւղում ես, գնա, չես ուզում, մի գնար, ազատ կամքից է կախուած։ Օրիորդ Վինոլուն, ինչոքս դրում են լրագրներում, մեծ վարձատրութեամբ հրաւիրում է թատրոնում երգելու, իսկ նա գալիս է մեզ մօտ ձրի երդելու։

— Ի հարկ է լաւ բան է, — հաստատում էին միւսները։ Միթէ մենք մարդիկ չենք։ Բարի խօսքը մեզ եւ հարկաւոր է։ Այստեղ, Աւղիդ Անկիւնում, ինչոքս մի

փոսի մէջ ենք նստած. լոյս էլ շենք տեսնում, գուցէ, մի բարի բան էլ մեր հոգու մէջ ընկնի:

Ընդհանրապէս տպաւորութիւնը խառնաշփոթ և անորոշ էր: Յայտարարութիւնները մի ինչ որ բոլորովին նոր, անսպասելի և անծանօթ բանի մասին էին խօսում: Նրանք այդ մասին պարզ հաշիւ չէին կարողանում տալ իրենց. Զնայելով դրան, շարաթ երեկոյեան Գրէյի շինութիւնը լիքն էր ժողովրդով: Ամենքը իրենց սովորական բանուորական կեղտոտ հագուստներով էին: Կային ոչ սակաւ լաւ խմածներ ևս Նրանք բարձրածայն ծիծաղում էին, հեռուից հեռու իրար ձայն էին տալիս և առհասարակ աղմուկ էին բարձրացնում: Տեսարանը շատ էլ դրաւիչ չէր:

Մէկսուէլ սաստիկ անհանգիստ էր. չէր իմանում թէ ինչպէս պէտք է խօսէր այդպիսի ամբոխի առաջ: Գրէյ առաջարկեց քարոզից ու երգից առաջ հարբածներին հեռացնել: Մէկսուէլ չհամաձայնեց:

— Թողնենք այստեղ բոլորին, ինչպէս որ կան, և փորձենք նրանց խաւարի զօրութեան դէմ մեր ունեցած լուսոյ զօրութիւնը դնել: Աշխատենք ազդել նրանց վրայ բարոյապէս, գեղեցիկ երգով ու բարի խօսքով: Թող առաջ օրիորդ Վինսլու երգէ մի երկու սաղմոս:

Գրէյ համաձայնեց և Հոաքէլը դուրս եկաւ աղմկող ամբոխի առաջ: Բաց գոյնի հագուստով, մեծ մաքուր մանկական աշքերով ու գեղեցիկ դէմքով Հոաքէլը, կեղտոտ ցնցստինելով ծածկուած ամբոխի մէջ, երկնքից իջած հրեշտակի էր նմանում: Նրա հայեացքի մաքութիւնն ու դէմքի պայծառ գեղեցիութիւնը հիացրին ամբոխին: Նրանք լոեցին: Հոաքէլը օգտուեց լուսթիւնից ու սկսեց իւր երգը:

Նրա ձայնը հնչում էր արծաթի պէս: Նրա մէջ լուսում էին օգնութեան աղաչանք և զղջման արտասուք: Կարծես Հոաքէլի մէջ մարմնացել էր այդ թշուառ ամբոխի հոգին և այդ հոգին այժմ աղօթում էր հեկեկանքով, լուանում արցունքով իւր բոլոր անօրէնութիւնները:

Ունկնդիրները հանդարտուեցան։ Ամենքը նստած կամ կանգնած էին որպէս մոռացութեան մէջ, Գաղանը զսպուած էր։ Ամբոխի սրտի մէջ սկսում էր զարթնել վաշ զուց մոռացուած, մի լաւ, ջերմ, սուրբ զգացում։ Նաւտերը գլուխները խոնարհեցրել ու մտախոհ դէպի ներքե էին նայում։ Ոմանց աչքերում արցունք էր փայլում, իսկ Հռաքէլը շարունակում էր իւր երգը և նրա ձայնը հեռ ծում էր վշտից։ Աստուծուց օրհնութիւն ազերսում։

Հռաքէլի երգը վշտում էր որպէս գարնան քնքոյշ զեփիւու ամբոխի վրայ և նրա ազգեցութեան ներքոյ այդտեղ ժողովուած կեղտոտ ու հարրած մարդկանց սրտերը մեղմանում էին։ Կանայք լալիս էին Բոլորի դէմքերն էլ պայծառացել էին ու կորցրել իրենց սովորական խստութիւնը։ Հողը պատրաստ էր։

— Օրիորդ Վինստոնն արեի մի ճառագայթ էր, որ թափանցեց Ուզիդ Անկիւնի մոայլ խորքերը, — ասաց Գրէյ, նրա երգը որպէս գարնան առատաբեր անձրեւ եղաւ թշուառ ամբոխի վրայ և նրանց սրտերը, ինչպէս վարած արտի կակուղ հող, այժմ Քրիստոսի սիրոյ ու արդարութեան սերմերի են սպասում։ Սկիզբը յաջող է, պէտք է այդպէս ել շարունակել, Գնացէք, պաստօր Մէկսուէլ։ Լոյս սփռեցէք մութ հօդիների մէջ։

Մէկսուէլ չէր լսում Գրէյի խօսքերը։ Նա կանգնած էր ձեռքերով երեսը ծածկած, և աղօթում էր։ Նա օգնութիւն էր խնդրում Աստուծուց։

Ինչպիսի տխուր պատկեր է ներկայացնում այստեղ հաւաքուած ամբոխը, — մտածում էր Մէկսուէլ։ Արանց հասարակութեան տականք են անուանում, և այդպէս էլ են։ Բայց ինչու են թողել սրանց իջնելու մինչեւ կեանքի ճահճի յատակը, ինչու ինքը եւանքը տղմոտ ճահճն է գտանում։ Այդ բանում ով է մեղաւոր։

Բայց այս հարցերը զօրեղ կերպով առաջ էին գալիս Մէկսուէլի գիտակցութեան մէջ, և տանջում նրա սիրտը

նրա առաջ կային հարիւրաւոր ըթացած դէմքեր և կոշտացած սրտեր։ Ի՞նչ էր արել նա մինչև այժմ նրանց

և նմանների համարու ԶԵ որ դրանք պէտք է լինէին իւր առանձին խնամքի առարկան։ ԶԵ որ քժիշկը առօգջներին չէ պէտք, այլ հիւանդներին։ Խոկ նա երբէք չի մասձել դրանց մասին և այժմ՝ առաջին անդամն է տեսնում դրանց իւր առաջ։

Մէկսուէլի մէջ զարթած հովուական կենդանի զգացումը տանշում էր նրա խիղճը։ Նա կը կամենար այժմ ջերմացնել այդ թշուառների սրտերը մի առանձին սիրով և նրան անհանդիսու էր անում միայն մի բան։ Կարող կը լինի արդեօք անելու այն, ինչ որ հարկաւոր է, կունենայ արդեօք դրա համար բաւականաշափ ոյժ։ Նա ջերմ կերպով աղօթում էր։

— Օգնիր ինձ, Տէր, զօրութիւն տներ իմ թոյլ խօսքին, ծագիր Քո լոյսը իմ հօգու մէջ, վառիր Քո սիրոյ կրակը իմ սառած սրտում։

Պաստոր Մէկսուէլ,— բանելով նրա ձեռքից ասաց, Գրէյ, — ձեր խօսելու ժամանակն է։ Ամբոխը շատ լաւ տրամադրուած է օրիորդ Վինուուի երգեցողութեան չնորհիւ։ Ձեռքից մի թողէք յաջող հանդամանքը։ Այդ պիսի բոպէներ այստեղ հազուագիւտ են, պէտք է օգտուել դրանից։

— Գնում եմ, — պատասխանեց Մէկսուէլ։ — Ես պատրաստ եմ։

Նա ելաւ ամբիոնի փոխարէն պատրաստած բարձրութեան վրայ և դարձաւ դէպի ամբոխը։

— Սիրելի բարեկամներ, իմ թանկագին եղբայրներ ու քոյլեր։ Ումանց աչքերում ես արտասուք եւ՛ նկատում, ամենքի գէմքերի վրայ թախիծ եմ տեսնում։ Թանգ է է այդ վիշտը։ Դուք ափսոսում էք, ի հարկէ, ձեր նախկին մանկական մաքրութիւնը, վաղուց կորցրած սրտի թարս մութիւնն ու քնքութիւնը։ Ես ցաւում եմ ձեզ համար ամրող հօգով։ Կեանքը ձեզ թշուառացրել է, ձեզ վշրել է։ Եւ այժմ ձեր կեանքը վշտերի ու հօգոսերի մի անընդհատ շարք է միայն կազմում։ Բայց մենք չենք եկել ձեզ գատելու, այլ եկել ենք ձեր առաջ խոստովանելու, որ

մենք ձեզ մոռացել ենք։ Մեզ համար ամօթ է, որ մեր՝ Քրիստոսի՝ նորա սիրոյ ու արդարութեան ժաման խօսողներիս մէջ կարող են լինել աղքատութեան, գինետան ու կեղտոտ նկուղների զոհ դարձած հաղարաւոր մարդիկ, ներէցէք մեղ. ձեռք ձեռքի տուէք մեզ հետ Աստուծոյ դործի համար։ Մասածեցէք, բարեկամներ, միթէ այդ կեանք է, որ դուք էք վարում։ Միթէ նրա համար է ստեղծել ձեզ Աստուած, որ ձեր ամբողջ կեանքը անցր կացնէք մի կողմից տաժանակիր աշխատանքի և միւս կողմից անասնական ստոր կրքերի սանձարձակութեան մէջ։ Պէտք է դուրս դալ այդ ցեխի միջից։ Պէտք է կեանքի ընթացքը փոխել։ Պէտք է այնպէս անել, որ Աւզ զիդ Անկիւնը ընթանայ Աստուծոյ օւղիդ ճանապարհով։ Այդ դժուար է, շատ մեծ միացեալ աշխատանք է պահանջում, բայց և այնպէս անհնար չէ։

Սիրեմի բարեկամներ, դուք առաջին անգամն էք հաւաքուում այստեղ։ Դուք լսեցիք օրիորդ Վինսլոուի երդեցողութիւնը, լսում էք և գէպի ձեզ ուղղուած իմ սիրոյ խօսքը։ Եթէ այս բոլորը ձեր սրտովն է, այսուհետեւ եկէք այստեղ։ Մենք կը հաւաքուենք շարաթը երեք անգամ։ Հորեքշարթի և շարաթ օրերը՝ երեկոյեան երբ վերջանում է ձեր աշխատանքը, և կիւրակի օրերը՝ ցերեկով։ Այս ժողովարանը մենք կանուանենք «Փարս» և թուզ նա պայծառ լոյս տայ այստեղի խաւարի մէջ։ Հաւանում էք դուք մեր ծրագիրը։ Բնդունում էք մեզ սիրով, ինչպէս որ մենք սիրով գալիս ենք ձեզ մօտ։ Աւզում էք սրոշուած ժամերին հաւաքուել այստեղ։

— Ենորհակալ ենք . . . շնորհակալ . . . կը դանք . . . եկէք . . . լսում էին ամբոխի միջից։

— Եթէ այդպէս է, գոհութիւն Աստուծոյ, — ասաց Մէկսուէլ. — Թո՞ղ Աստուած օրհնէ մեր դործի սկիզբը։ Զորեքշարթի մենք կըսպասենք ձեզ այստեղ, իսկ այժմ երդենք բոլորս միասին «Հայր մերը», աղօթենք երկնաւոր Հօրը, որ նա ընդունէ մեր՝ անարժաններիս աղօթքը, որ օգնէ մեզ իւր կամքը կատարելու և մեր կեանքի ճահիճը

Առառնելով Արքայութիւնը դարձնելու, որ մեր ամենօրեայ հացը տայ մեզ մեր մարմնի և հոգու համար, և որ ազատէ մեղ ինչպէս արտաքին փորձութիւններից, այնպէս և մեր մէջ եղած չարից:

Ամենքը ոտքի կանգնեցին: Հռաքէլ Վինսլու սկսեց երգել, միւսները հետևեցին նրան: Տեսարանը յուզիչ էր: Մի քանի հարիւր թափառաշրջիկ և փողոցից հաւաքուած մարդիկ առաջին անգամ իրենց կեանքի մէջ ի միասին աղօթում էին:

Երբ երգը վերջացաւ, անհաստատ քայլերով բարձրութեան վրայ ելաւ խղճալի տեսքով, ուռած դէմքով մի թափառաշրջիկ, Կմկմարով նա դիմեց պատորին ու Հռաքէլին. — Ներեցէք ինձ . . . իմ անկապ խօսքերը . . . , ես թափառաշրջիկ եմ, ինձ կոչում են «Մխոտած» . . . , ես ամբողջովին մխոտուած եմ բանտերում ու գինետներում: Ես գողութիւն եմ անում և յետոյ կամ խմում եմ, կամ բանտ նստում, Աւրիշ տեսակ կեանք ես չեմ յիշում. երեսուն ինը տարեկան եմ, քսան երկու տարին բանտումն եմ անցկացրել, ես կարծում էի, որ իմ մէջ այլ ևս մարդկային ոչ մի նշոյլ չի մնացել . . . Ստկայն գուրսէ գալիս, որ այդպէս չէ: Դուք բաց արեցիք իմ ներսի կողմը և ցոյց տուեցիք, որ իմ մէջ մի ինչ որ տեղում՝ դեռ հոգու մի փոքրիկ կտոր կայ մնացած, ես հկել էի այստեղ փոքր ինչ զուարճանալու, աղմկելու ընկերներիս հետ: Դուրս ելաւ այս երիտասարդ օրիորդը և հարկադրեց ինձ լաց լինել, ես մոռացայ, որ մի թափառաշրջիկ եմ, յիշեցի, թէ ինչպէս փոքր ժամանակս գիւղում մօրս մօտ էի, ինչպէս նա սիրում ու փայփայում իւր փոքրիկ ջօնին . . . ես վաղուց մոռացել էի, թէ ինչ է հոգու ջերմութիւնը, դուք այսօր ինձ ցոյց տուիք այդ: Ես յիշեցի նոյն իսկ, թէ ինչպէս հանգուցեալ մայրս կարդում էր Աւետարանից Փրկչի այս խօսքերը, «այն ամենը ինչ որ արիք իմ փոքրիկ եղբայրներից մէկի համար, ինչ համար արեցիք»: Դուք այսօր շատ բան արիք փոքր եղբօր համար, Փրկիչը կը հատուցանէ ձեզ իմ փոխարէն: Նե-

րեցէք ինձ:

Թափառաշրջիկը վայր իջաւ և դուրս եկաւ բակից.
Նրան հետեւեց մնացած ամբոխը: Այնտեղ մնացին միայն
Մէկսուէլ, Գրէյ, Հռաքէլն ու Զէսպեր Զէզը:

Նրանք փոխանակում էին իրանց տպաւորութիւնները:
— Ես կարծում եմ, որ այստեղ կարելի է գործ կա-
տարել: — ասաց Գրէյ: — Դրութիւնը այնքան էլ յուսա-
հատական չէ, որքան կարելի էր սպասել:

— Ի հարկէ, — համաձայնեց Մէկսուէլ: — Հէնց մենակ
այդ խեղճ մխոտածը բաւական էր, որպէս զի գործը
պսակուած համարուէր, իսկ նա, անշուշտ, մի բախտաւոր
բացառութիւն չէր: Հաւանօրէն ուրիշների սրտի մէջ ես
մի բան ընկած կը լինի: Ես համօղուած եմ, որ այս երեւ-
կոն մենք ի զուր չկորցրինք:

Հռաքէլը ոչինչ չէր տսում: Նա լցուած էր չտեսնուած
ուրախութեամբ և վախենում էր խօսել: Նա բռնեց Զէս-
պէր Զէզի թերից և լուռ դէպի տուն գնաց:

Գլ. է.

Հռաքէլը, Զէսպէր Զէզ պէտք է անցնէին կէս ճանաւ-
պարհը նեղ և ծուռ փողոցներով անդադար հարց ու փորձ
անելով, թէ որ փողոցով գնան: Փողոցները նեղ էին և
ցեխոտ, տները՝ հին, մռայլ: Պատուհաններից շատերը
թղթած էին կամ հին շորով խցած: Ամեն տեղ երեսում
էին գինետներ, ճաշարաններ և խմիչքի խանութներ:

Երեխանները գունատ էին և մարմնով նիհար. Նրանց
աչքերը լուրջ հայեացը ունէին և թւում էր, թէ նրանց
մանկական հայեացը մէջ նշմարւում էր կեանքից պա-
հանջուած ծերութիւն: Կեղտոտ և ցնցոտիններով պատած
նրանք նմանում էին փողոց ձգած կատուի ձագերի:

— Աստուած իմ, Աստուած, — բացականչեց Հռաքէլ
տեսնելով երեխաններին: — Ի՞նչպէս է անցնում որանց ոսկէ
մանկութիւնը. ինչով են շնչում. ինչպէս են ապրում, ինչ
են տեսնում. ինչ տպաւորութիւն ու ազգեցութեան տակ

են մեծանում սրանք։ Դժուար է հաւատալ, որ սա քաղաքակիրթ երկրի մի քաղաքի մասն է։ Միթէ Փրկիչ հանգիստ կերպով կարող էր անցնել այստեղից։ Ի՞նչպէս է, որ մենք, քրիստոնեաներս, տանում ենք այս ամենը՝ մեր կողքին, մեր շէմքին կից։

Այդ խղճալի թշուառները թափառաշրջիկները աղքատ և անգործ բեռնակիրները, արհեստաւորներն ու բանւորները յիշեցնում էին Հռաքէլին աւետարանի անգամալոյթին, որ երեսուն ութ տարի ընկած էր պրօպատիկէ աւազանի մօտ և չէր կարողանում օգտուել ջրի բռւժիչ գօրութիւնից։

—Մարդ չունիմ, որ ինձ բարձրացնի. —ասում էր խեղճը։

—Սոքա նոյնպէս մարդ չունին, որ նրանց բարձրացնէր, —մտածում էր Հռաքէլը։

Եւ նրանք ընկած են այստեղ անօգնական, իրենք փշանում են և վարակում ուրիշներին։ Բայց չէ որ կենդանի խօսքը նրանց վրայ ևս ազդեցութիւն ունի, որտեղ ձայնը ցնցոտիների տակ ևս մուտք գտնել կարող է։

Հռաքէլը յիշեց, թէ ինչպէս իւր երգը ջերմ ազդեցութիւն ունեցաւ նրանց վրայ, ինչպէս նրանց կոպիտ և գաֆան դէմքերը պայծառացան, որքան մաքուր արցունքներ փայլեցին նրանց աչքերում։

—Որպիսի պտղաբեր և պատրաստի հող է ներկայացնում։ Ճնայելով երեսի վրայ թողնուած լինելուն, այդ ժողովուրդը, ասաց նա Զէզին։ —Եթէ մի երեկոյ երգով և քրիստոնէական մաքուր կեանքի հրաւէրով կարելի եղաւ այդչափ ազդել նրանց վրայ, որչափ կարելի էր ազդել ամիսների և տարիների ընթացքում։ Լրագրների մէջ ժամանակ առ ժամանակ գրում են, որ Ռւզիդ Անկիւնի տների ու փողոցների կեղտոտութիւնը ամօթաբեր է քաղաքային վարչութեան համար։ Իսկ Ռւզիդ Անկիւնի փողոցներում ապրող մարդկանց բարոյական անմաքրութիւնը միթէ մեծ ամօթ չէ քրիստոնեայ քաղաքի, մեզ, նրանց հետ կողք կողքի ապրողներիս հայրու

— Դուք, օրինակի համար, Զեղ, հեղինակ էք. դուք վէս էք գրել, որ յաջողութիւն է գտել, կարդացում է. ձեր մասին գովասանական յօդուածներ են դրում. Դուք, կը նշանակէ, տաղանդ ունիք Խնչու դուք չպէտք է գրէք այս խեղճերի կեանքի մասին և այնպէս, որ նա ամենքի որսի փափուկ թելերին խփիս Քանի դնում աւելի են զայրացնում ինձ բոլոր այդ անթիւ վէպերը, վէպիկներն ու պատմուածքներ. Ի՞նչ լեզուով գիրք էլ որ վերցնելու լինիք, ի՞նչ հեղինակի վէպեր որ կարդալու լինիք, ամեն տեղ սէր, սէր և սէր. Այս ինչը սիրեց, այն ինչը մոռացաւ իւր սէրը, երբորդին դաւաճանեցին. Հաղար տարիւներ են անցնում, հարիւրաւոր սերունդներ են փոխում, կեանքի նորանոր կարգեր են մշակում, սակայն վիալասանները շարունակ մնում են նոյն տեղում, շարունակ նոյն նիւթի մասին գրում, շարունակ սիրոյ նոյն հին երգը երգում. Միթէ կեանքի մէջ, բացի տղամարդու և կնոջ մէջ եղած սիրոց, սիրահարութիւնից, ամուսնական դաւաճանութիւնից, չկան այլ հետաքրքրական երեսյթներ, կենսական խնդիրներ, խոր կերպով զբաղեցնող ու յուղով հարցեր. Իմ կարծիքով, այդ ուղղակի յանցանք է վիալասան — հեղինակների կողմից, նրանց դրուածների ընթերցողը պատանեկան, երբեմն նոյն իսկ մանկական տարիւներից միասած լողում է սիրոյ մթնոլորդում, սիրոյ խազերով ապրում, սիրային արկածների հետևանդներով յուղում, սիրահարութեան զգացմունքին, որպէս աշխարհի հիմնական, ամենասուրբ և ամեն ինչ իրեն ենթարկող զգացմունքի վրայ նայել սովորում։

Զգիտեմ, գուցէ գուք ինձ միամիտ անուանէք. ծիծծաղէք ինձ վրայ, սակայն ես հաստատ եմ իմ աստծին և վիալասանների գրելու սովորական եղանակը դատապարտելի եմ համարում և անարժան լուրջ գեղարօւեստի։ Հեղինակի տաղանդը փոխանակ ամբիոն բարձրանալու և ուսուցիչ լինելու, կանգնում է ամբոխի յետել և գիտակցաբար թէ անգիտակցաբար ծառայի ստորացուցիչ դեր է կատարում, շոյելով նրա ստոր հակումները։ Տղա-

մարդուն և կնոջը իրար գիրկ նետող բնազդը առանց այն էլ զօրեղ է և նոյն իսկ աւելի զարգացած, քան հարկաւոր է։ Հարկ չկայ այդ բնազդը աւելի ևս զարգացնելու։ Նրա մասին աւելի լաւ է լուել, քան թե շարունակ խօսելու

Ներողութիւն,—ընդհատեց Զէզ,—դուք շատ խիստ էք, օրիսրդ Վինսլու, դէպի մեզ՝ խեղճ վիպասաններաւ Մենք, եթէ նոյն իսկ մեղաւոր ենք, բայց ոչ այդ շափով և յամենայն դէպս ներողամտութեան արժանիւ Գեղարուեստը կեանքի վերարտադրութիւնն ու պատկերացումն է և հեղինակը, վիպասանը մեծ թէ փոքր տաղանդով պատկերացնում է իւր գրուածի մէջ այն, ինչ որ տեսնում է իւր շուրջը։ Նա իւր նիւթը վերցնում է կեանքից և ի հարկէ պատասխանատու չէ իրականութեան պակասաւորութեան համար։ Այդ նկատմամբ պէտք է հաշիւաեսնել կեանքի և ոչ թէ հեղինակի հետ և վիպասանին դատել պէտք է միմիայն ընտրած նիւթի գեղարուեստական կամ կամ ոչ գեղարուեստական մշակութեան տեսակէտից։

—Ես միանդամայն համաձայն չեմ ձեզ հետ,—պատասխանեց Հռաքէլ։ Հեղինակը պէտք է աղնուացնէ, մշակէ ամբոխի ճաշակը, իսկ դրա համար հարկաւոր է, որ նա ինքը ճաշակ ունենայ և զգուշութեամբ ընտրէ իւր նիւթը։ Խոհուն և դիտող հեղինակին կեանքը բազմազն նիւթեր, տիպեր և խնդիրներ է տալիս ի՞նչու, կրկնում եմ, վիպասանները շարունակ մէկ նիւթի վրայ են կանդնում և միշտ մարդկային նոյն կրքի մասին խօսում։

—Ո՛չ, Զէզ,—շարունակում էր Հռաքէլլու—Ամեն մի իրականութիւն չպէտք է նիւթ գառնայ գեղարուեստական գրականութեան համար։ Գրականութիւնը մարդկութեան ինքնակենսագրութիւնն է՝ նկարագրուած նրա լաւագոյն և տաղանդաւոր ներկայացուցիչների ձեռքով։ Միթէ մարկանց կեանքի մէջ եղած բռլոր դէպքերը տեղ պէտք է ունենան հանրամարդկային ինքնակենսագրութեան էջէրում։ Մարդկային կեանքի տղմոտ ճահճի յատակում կան ամեն տեսակ կեղտոտութիւններ։ Այդ ամենքը գիտեն և տաղանդաւոր հեղինակի համար մեծ արժանիք չէ,

եթէ նա մի աւելորդ անդամ ևս յիշեցնէ ընթերցողներին այդ անմաքրութիւնների մասին։ Ամեն մէկս մեզնից բաւականաչափ ունինք այդ պակասութիւններից և ես նախագահառում եմ, որ հեղինակը իւր գեղարուեատական խօսքով օգնէր ինձ աւելի մաքրուելու և եղած անմաքրութիւնները մոռանալու։

Այս,—վրայ բերեց Զէսալեր Զէզ,—բայց ինչ արած, երբ մարդիկ յաճախ խեղդւում են սեփական անմաքրութեան մէջ, մինչև կոկորդը խրուած են նրա մէջ, բայց դարձեալ չեն զգում այդ, գոհ են իրենց վիճակից։ Ի՞նչ պէս կը կամենաք, որ վարուի հեղինակը, երբ տեսնում է այդ սարսափելի դրութիւնը և ոյժ է զգում իւր մէջ պարզելու այդ ամենը բթացած ամբոխին։ Միթէ պէտք է փակի աչքերը, չտեսնելու դնի ու լուսնեան տայ։

Ոչ,—պատասխանեց Հռաքէլը, — նա պէտք է գրէ, խօսէ, բարձրածայն աղաղակէ իրեն յուզող կեանքի երեւոյթների, այս կամ այն անմաքուր կողմերի մասին, բայց նա չպէտք է այդ անմաքրութիւնները ընթերցողների առաջ ի ցոյց դնի, այլ պէտք է դէպի այդ զգուանք զարսթեցնի, անդիմադրելի ձգտումն առաջացնի դէպի լաւը, դէպի աւելի մաքուր և վսեմ կեանք։ Հեղինակը չպէտք է լողացնի ընթերցողներին իւր նկատած տղմի մէջ, այլ աւելի շուշ պէտք է հանէ նրան այդտեղից դէպի Աստուծոյ մաքուր աշխարհը։

Ահա հէնց այդ մասին և ուզում էի խնդրել ձեզ։ Դրեցէք մի գիրք այն տղմի մասին, որի մէջ ընկղմուած է Ուղիղ Անկիւնը և նորա հետ միասին բոլոր քրիստոնեայ երկրների մեծ քաղաքներում գտնուած միլիոնաւոր նոյն պիսի թշուառներ։ Զարթեցրէք մարդկանց քնած խիղճը։ Նկարագրեցէք մի շարք պայծառ պատկերներով այն բոլոր սարսափելի իրոզութիւնները, որոնք տեղի են ունենում այնտեղ, որպէս զի այդ երկրային գժոխքից ելած հեծեծանքն ու ատամների կրծոցը հասնէ այն մարդկանց ականջներին, որոնք աչք ունին և չեն աեսնում, ականջ ունին և չեն լսում։

— Այդի շատ գժուար է, օրիորդ Վինսլու, — պատասհանանեց Զէզ: — Պէտք է շատ երկար ուսումնասիրել այդ թշուառների կեանքը, ճանաչել նրանց հոգին և վերջառ պէս պէտք է անձամբ սիրել նրանց բալոր սրտով, նոյն այդ սէրը ուրիշներին հաղորդելու համար:

— Ահա հէնց գորա մասին է, որ ես խօսում եմ, դառնաւթեամբ ասաց Հոաքէլը. վիպասանները ընդհանուր առմամբ չեն տալիս այն, ինչ որ մենք իրաւունք ունինք նրանցից սպասելու: Մարդկանց մէջ բարի զդացմանկներ զարթեցնել, նրանց դէպի լոյս տանել գժուար գործ է և մեծ ջանք է պահանջում: Պէտք է անձամբ սիրել մարդկանց, նախ և առաջ անձամբ լուսաւորուել և պայծառ իդէալներով ոգևորուել:

— Այդպիսի գիրքը, օրիորդ Վինսլու, շատ քիչ ընթերցողներ կունենայ:

— Բայց գորա փոխարէն այդպիսի մի ընթերցող հաղար ուրիշներ կարժենայ:

— Այդպիսի ընթերցողներ պէտք է դեռ կրթել, պատրաստել, — շարունակում էր Զէզ:

— Կրթեցէք, ուրեմն, նրանց ձեր գրուածներով, ալընդում էր Հոաքէլը: Մի նկարագրէք միմիայն կեանքի ախտեցը, այլ և բժշկեցէք նրանց, մի բաւականացէք միմիայն ձեր նկարագրած պատկերների և տիպերի գեղարվուեստական կողմով, այլ և ձգտեցէք, որ ձեր ամեն մի նոր գրքի շնորհիւ թէ մարդիկ և թէ կեանքը աւելի և աւելի մօտենան գեղեցկին, բարուն և արդարութեան:

Այս խօսքերով մեր խօսակիցները հասան Հոաքէլի ընտակարանին և Հոաքէլը բաժանուելով Զէզից, ասաց նրան:

— Դուք մի լաւ խորհեցէք մեր խօսակցութեան մասին:

Ոռուս, թարդմ. Մամբրէ վարդապետ.

